# 140 Երանի՛ հոգով ես Քեզ հանդիպեի,

1. Երանի՛ հոգով ես Քեզ հանդիպեի,
Վերքերդ գրկած՝ անվերջ արտասվեի:
Հոգուս փափագը Քեզանից առնեի
Ու Քո երկնքին արժանի լինեի:

2. Երբ որ վախ ու դող իմ վրա ընկնեն,
Մահ ու արհավիրք իմ շուրջը պատեն,
Աղավնու նման թևեր ես կառնեմ
Ու իմ փախչելը ես կարագացնեմ:

3. Դառնացած կյանքիս միակ դարմանն ես,
Վշտացած հոգուս Դու սիրեկանն ես:
Խաչված կյանքով Քո հոգուս մեջ ապրի՛ր,
Որ չուրանամ Քեզ մինչև մահ, Տե՛ր իմ:

4. Միայն թե Քեզ, Տե՛ր, արժանի լինեմ,
Կոտրած ու խոնարհ գառդ ես լինեմ:
Երկնային կյանքով հոգուս մեջ ապրի՛ր,
Ինձնից անբաժան անվերջ Դու եղիր: